Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում ծրագիր

Վարկ թիվ 8495-AM

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	8
Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	9
Հատուկ հաշվի հաշվետվություն	11
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի համար (այսուհետ՝ «Ծրագիր») ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները, Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը, հատուկ հաշվի հաշվետվությունները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար, ինչպես նաև ծախսերի մասին հաշվետվությունը (ԾՄՀ), որը ներկայացվել է Համաշխարհային Բանկ՝ 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումները հիմնավորելու նպատակով, ինչպես նաև ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ծրագրի ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցների, 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

Ի հավելումն, մեր կարծիքով ներկայացված ԾՄՀ-ները, ինչպես նաև դրանց պատրաստման համար ներդրված ներքին վերահսկողությունը և ընթացակարգերը կարող են վստահելի հիմք հանդիսանալ 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումների համար:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ից և և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ից (Ընկերություններ)՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում

կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների շեշտադրում

- Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որտեղ նկարագրվում է հաշապահական հաշվառման հիմունքը: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ղեկավարությանը՝ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:
- Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 3-ի վրա, որտեղ նշվում է, որ Ծրագրի փակման ամսաթիվը 2019թ. դեկտեմբերի 31-ն է: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:
- Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 11-ի վրա, որտեղ նշվում է, որ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատն իրականացրած հաշվեքննության արդյունքներով արձանագրել է անհամապատասխանություններ և այլ փաստեր Ընկերությունների կողմից իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերությունների ղեկավարությունը պատասխանատու է սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցների, ինչպես նաև 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների համաձայն պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է:

Grant Thornton

Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ծրագրի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերությունների ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Գնահատում ենք ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

28 հունիսի 2019թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ծրագրի իրականացնող՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

ԱՄՆ դոլար	Ծանոթ.	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ծրագրի կուտակային ծախսեր		9,038,414	2,258,369
Կանխավճարներ	4	805,075	1,973,702
Մնացորդներ բանկերում	5	717	2,409
Ընդամենը ակտիվներ		9,844,206	4,234,480
Ֆոնդեր և պարտավորություններ			
Ֆոնդեր			
Ծրագրի կուտակային ֆինանսավորում		8,430,624	3,958,489
Փոխարժեքային տարբերություն		(1,747)	(2,283)
		8,428,877	3,956,206
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	6	1,415,329	278,274
Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ		9,844,206	4,234,480

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2019թ. հունիսի 28-ին՝

Հայկ Հարությունյան
Գլխավոր տնօրեն

Գևորգ Մուրադյան
Գլխավոր հաշվապահ

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ծրագրի իրականացնող՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

ԱՄՆ դոլար	Ծանոթ.	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ծրագրի կուտակային ծախսեր		20,699,877	6,360,329
Կանխավճարներ	4	318,757	3,123,382
Մնացորդներ բանկերում	5	1,193,928	936,799
Ընդամենը ակտիվներ		22,212,562	10,420,510
Ֆոնդեր և պարտավորություններ			
Ֆոնդեր			
Ծրագրի կուտակային ֆինանսավորում		21,116,531	7,135,123
Փոխարժեքային տարբերություն		225,512	131,906
		21,342,043	7,267,029
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	6	870,519	3,153,481
Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ		22,212,562	10,420,510

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2019թ. հունիսի 28-ին:

Սասուն Խաչատրյան
Գլխավոր տնօրեն

Գարի Ախոյան
Հաշվապահական բաժնի ղեկավար

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 21-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	Տարվա համար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա համար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա համար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծրագիր
Ֆոնդերի աղբյուրներ							
ՎԶՄԲ վարկ թիվ 8495-ԱՄ (տե՛ս ծանոթ. 7)	14,938,626	23,433,923					
Կառավարության համաֆինանսավորում	3,514,917	6,092,811					
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսավորում	-	20,421					
Ընդամենը	18,453,543	29,547,155					
Փոխարժեքային տարբերություն	94,142	223,765					
Նվազեցնել. Ֆինանսավորման օգտագործում							
Հոդված 1.Ծրագրի Մաս 1(ա), 1(գ), 1 (դ), 2 և Մաս 3 (բ)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր	6,780,045	8,983,928	6,103,773	8,307,656	676,272	676,272	27,175,000
Հոդված 2. Ծրագրի Մաս 1(բ), 1(ե) և 3(ա)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր	14,339,548	20,624,363	15,354,391	21,639,206	(1,014,843)	(1,014,843)	37,687,500
Սկզբնավճար	-	130,000	-	130,000	-	-	130,000
Ընդամենը	21,119,593	29,738,291	21,458,164	30,076,862	(338,571)	(338,571)	64,992,500
Շրջանառու կապիտալի զուտ աճ/(նվազում) (տե՛ս ծանոթ. 8)	(2,571,908)	32,629					

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	Տարվա համար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա համար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա համար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծրագիր
Բաղադրիչ 1: Էլեկտրահաղորդման ցանցի հզորացում	6,689,414	8,695,895	5,888,376	7,894,857	801,038	801,038	28,525,000
Ենթաբաղադրիչ 1(ա) Աշնակում տեղակայված ԲԷՑ-ի էլեկտրական ենթակայանի վերականգնում	13,939,538	20,146,979	14,958,076	21,165,517	(1,018,538)	(1,018,538)	35,875,000
Ենթաբաղադրիչ 1(բ) ԵՋԷԿ-ի էլեկտրական ենթակայանի վերականգնում	82,817	256,340	211,795	385,318	(128,978)	(128,978)	3,250,000
Ենթաբաղադրիչ 1(գ) Հատուկ մեքենաների և տրանսպորտային միջոցների ձեռքբերում	-	-	-	-	-	-	212,500
Ենթաբաղադրիչ 1(դ) Ծրագրի իրականացման աջակցություն ԲԷՑ-ին	400,010	477,384	396,315	473,689	3,695	3,695	187,500
Ենթաբաղադրիչ 1(ե) Ծրագրի իրականացման աջակցություն ԵՋԷԿ -ին							
Բաղադրիչ 2: Էլեկտրական համակարգի ղեկավարման բարելավում							
Ենթաբաղադրիչ 2(ա) Դիսպետչերական կենտրոնի հիմնում	-	2,000	-	2,000	-	-	3,062,500
Ենթաբաղադրիչ 2(բ) ԷԷՀՕ ՓԲԸ-ի համար դիսպետչերական կենտրոնի կառուցման նպատակով Ծրագրի իրականացման աջակցություն և վերահսկողություն	-	16,824	-	16,824	-	-	62,500
Բաղադրիչ 3: Էլեկտրաէներգիայի արտադրության նոր ծրագրի նախապատրաստում							
Ենթաբաղադրիչ 3(ա)Նոր ՀՑԳՏ ներդրման մշակում	-	-	-	-	-	-	1,625,000
Ենթաբաղադրիչ 3(բ) Ծրագրի աուդիտ	7,814	12,869	3,602	8,657	4,212	4,212	62,500
Սկզբնավճար	-	130,000	-	130,000	-	-	54,486
Ընդամենը	21,119,593	29,738,291	21,458,164	30,076,862	(338,571)	(338,571)	72,916,986

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

Ծրագրի իրականացնող՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Հոդված 1.Ծրագրի Մաս 1(ա), 1(գ), 1 (դ), 2 և Մաս 3 (բ)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր	Ընդամենը
DA-16	1,422,941	1,422,941
DA-20	964,250	964,250
DA-25	868,009	868,009
Ընդամենը	3,255,200	3,255,200

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հատուկ հաշվի հաշվետվություն

Ծրագրի իրականացնող՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Վարկ թիվ 8495-ԱՄ
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ		2,409
Ավելացնել.		
Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում տարվա ընթացքում	2,027,000	
	2,027,000	2,027,000
Նվազեցնել. Հատուկ հաշվից փոխհատուցում Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկին տարվա ընթացքում		2,409
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		2,029,409
Վերջնական մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		717
Ավելացնել.		
Ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	2,028,692	
Ծառայության վճարներ (եթե առկա է)	-	
	2,028,692	2,028,692
Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		-
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		2,029,409
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հատուկ հաշվի հաշվետվություն

Ծրագրի իրականացնող՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

Վարկ թիվ 8495-ԱՄ
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ		934,757
Ավելացնել.		
Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում տարվա ընթացքում	10,377,355	
	10,377,355	10,377,355
Նվազեցնել. Հատուկ հաշվից փոխհատուցում Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկին տարվա ընթացքում		-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		11,312,112
Վերջնական մնացորդ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		1,193,928
Ավելացնել.		
Ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	10,118,184	
Ծառայության վճարներ (եթե առկա է)	-	
	10,118,184	10,118,184
Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		-
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		11,312,112
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիրը (այսուհետ՝ «Ծրագիր») ֆինանսավորվում է 2015թ. ապրիլի 8-ին կնքված թիվ 8495-AM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության միջև:

Ծրագիրն իրականացվում է համատեղ՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից (միասին՝ «Ընկերություններ»):

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ («ԲԷՑ») ստեղծվել է ՀՀ Կառավարության 1998թ. հուլիսի 20-ի թիվ 450 որոշման հիման վրա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման և ՀՀ կառավարության 1999թ. նոյեմբերի 23-ի թիվ 709 որոշման հիման վրա «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու միջոցով, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերությանը միացման ճանապարհով: Ընկերությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկության, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության և «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդն է:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն («ԵՋԷԿ») ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 538 որոշման հիման վրա, որի համաձայն «Երևանի Ջերմաէլեկտրակայանը» դարձել է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ:

Համաձայն 2015թ. օգոստոսի 14-ին Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ու «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի միջև ստորագրված ենթավարկային համաձայնագրի՝ Ֆինանսների նախարարությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին ու «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին է փոխանցել ՎԶՄԲ վարկ՝ 52,000,000 ԱՄՆ դոլար, որը պետք է օգտագործվի միայն Ծրագրի իրականացման նպատակով:

Ծրագրի նպատակն է հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումն ու թողունակության մեծացումը, ինչպես նաև աջակցել Հայաստանի Հանրապետությանը բարձրորակ էլեկտրաէներգիայի մատակարարման հարցում:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Էլեկտրահաղորդման ցանցի հզորացում

(ա) ԲԷՑ-ի Աշնակ էլեկտրական ենթակայանի վերակառուցումն ի թիվս այլնի՝ (ա) հիմնական սարքավորումների ամբողջական կամ մասնակի փոխարինման և /կամ վերականգնման, (բ) վերահսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի տեղադրման և (գ) հսկողության սենյակների համար նոր շենքի կառուցման միջոցով:

(բ) Երևանի ՋԷԿ-ի էլեկտրական ենթակայանի վերակառուցումն ի թիվս այլնի՝ (ա) հիմնական սարքավորումների ամբողջական կամ մասնակի փոխարինման, (բ) վերահսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի տեղադրման, (գ) հսկողության

սենյակների համար նոր շենքի կառուցման և (դ) նշված ենթակայանից էլեկտրաէներգիայի մատակարարման համար պահանջվող հաղորդման օդային գծերի վերամիացման միջոցով:

(գ) Սարքավորումների ձեռքբերում՝ ներառյալ մեքենաներ և մասնագիտացված փոխադրամիջոցներ, որոնք անհրաժեշտ են Ծրագրի Մաս 1 (ա)-ի և 1 (բ)-ի իրականացման համար:

(դ) ԲԷՑ-ին Օժանդակության տրամադրում՝ Ծրագրի իր Համապատասխան Մասերի, ի թիվս այլնի՝ Ծրագրի նշված Մասերի շրջանակում աշխատանքների իրականացման համար, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 2-րդ Ցանկի դրույթներին համապատասխանությունը վերահսկելու համար տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով,

(ե) Երևանի ՋԷԿ-ին Օժանդակության տրամադրում՝ Ծրագրի իր Համապատասխան Մասերի, ի թիվս այլնի՝ Ծրագրի նշված Մասերի շրջանակում աշխատանքների իրականացման համար, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 2-րդ Ցանկի դրույթներին համապատասխանությունը վերահսկելու համար տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով:

Բաղադրիչ 2. Էներգահամակարգի ղեկավարման բարելավում

Կարգավարման պահուստային կենտրոնի ստեղծում, ի թիվս այլնի՝ (ա) ԲԷՑ-ի Գործառնական ձեռնարկում հիշատակվող՝ ընտրված շենքի ներքին մակերեսի վերանորոգման, (բ) անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման և տեղադրման և (գ) պահանջվող այլ աշխատանքների իրականացման միջոցով:

Բաղադրիչ 3. Էլեկտրաէներգիայի արտադրության նոր ծրագրի նախապատրաստում

(ա) ՀՑԳՏ ներդրման նախագծի կազմում (առանց իրականացումը ներառելու), ներառյալ, ի թիվս այլնի, (ա) (Ա) ֆինանսական իրագործելիության ուսումնասիրության, (Բ) շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման իրականացում, (բ) մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորման համար պահանջվող գործարքների վերաբերյալ տեխնիկական աջակցության տրամադրում և (գ) ՀՑԳՏ ներդրման նախապատրաստման համար պահանջվող այլ տեխնիկական աջակցության տրամադրում:

(բ) Ծրագրի աուդիտների իրականացում:

Ծրագրի ֆինանսավորումը բաղկացած է հետևյալ մասերից.

Հոդված	Վարկի հատկացված գումարը (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (առանց հարկերի)
(1) Հոդված 1.Ծրագրի Մաս 1(ա), 1(գ), 1 (դ), 2 և Մաս 3 (բ)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր	28,140,000	80%
(2) Հոդված 2. Ծրագրի Մաս 1(բ), 1(ե) և 3(ա)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր	22,230,000	80%
(3) Սկզբնական վճար	130,000	
Ընդամենը	50,500,000	

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Անդրանիկի 1:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, ինչպես նաև Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցի հոդվածների և թիվ 8495-AM վարկային համաձայնագրի համապատասխան պահանջների համաձայն: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

Այս ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հետևյալ կերպ.

- Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները յուրաքանչյուր Ընկերության համար ներկայացված են առանձին,
- Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը պատրաստված են համատեղ երկու Ընկերությունների համար: Այնուամենայնիվ, հաշվետվություններում բացահայտվում են ստացված և օգտագործված ֆինանսավորման աղբյուրները առանձին յուրաքանչյուր Ընկերության համար:
- Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները ներկայացված են այնպես, որ հաշվի մնացորդները և գործարքների դասերը ներկայացված են յուրաքանչյուր Ընկերության համար:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ): Սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի նախորդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքով: Համաշխարհային բանկի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են client connection (https://clientconnection.worldbank.org) համակարգի փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցները, կանխավճարները և կրեդիտորական պարտքերը վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը. 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 483.75 ՀՀ դրամ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում՝ 484.10 ՀՀ դրամ): Փոխարժեքային տարբերությունը ճանաչվում է ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Փոխարժեքային տարբերություն» հոդվածում:

2.3 Ծրագրի ֆինանսավորում

Թիվ 8495-AM վարկային համաձայնագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ի լրումն՝ տարվա ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում:

2.4 Ծրագրի ծախսեր

Ծրագրային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ակտիվներում: Ի հավելումն՝ ընթացիկ տարվա ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություններում:

2.5 ՎԶՄԲ ֆինանսավորում

Վարկային համաձայնագրի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել փոխառուին՝ նրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել փոխառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը զուգընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը փոխառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձանց՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար փոխառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է փոխառուի և Բանկի կողմից:

2.6 Պլանավորված ծախսեր

Ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ծրագրի պլանավորված ծախսերը բաղկացած են նախորդ ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ծրագրի փաստացի ծախսերի և հաշվետու տարվա բյուջեի ծախսերի հանրագումարից:

2.7 Կանխավճարներ

Կանխավճարները, որոնք բաղկացած են շինարարական աշխատանքների, ծառայությունների և ապրանքների դիմաց վճարված գումարներից, չափվում են անվանական արժեքով:

2.8 Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ներառում են վճարվելիք գումարները, որոնք չափվում են անվանական արժեքով:

3 Ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն վարկային համաձայնագրի՝ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2019թ. դեկտեմբերի 31-ը:

4 Կանխավճարներ

Ծրագրի իրականացնող՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Քսիան էլեկտրիկ էնջինիրինգ ՍՊԸ	391,392	1,476,523
Կոնսուլեկտրա և Դեկոն Կոնսորցիում	15,541	32,543
Հայաստանի Հանրապետության պետական բյուջե	398,142	464,636
	805,075	1,973,702

Պետական բյուջե կատարված կանխավճարները ներկայացված են ստորև.

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Քսիան էլեկտրիկ էնջինիրինգ ՍՊԸ (ոչ ռեզիդենտի շահութահարկ)	136,822	188,431
Կոնսուլեկտրա և Դեկոն Կոնսորցիում (ոչ ռեզիդենտի շահութահարկ)	3,885	7,084
Ավելացված արժեքի հարկ և այլն	257,435	235,609
Մաքսային տուրքեր	-	33,512
	398,142	464,636

Ծրագրի իրականացնող՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կոբրա Ինստալասիոնեսի Սերվիսիոս Էս. Էյ.	-	1,164,032
Էյ Բի Բի Էյ Բի ենթակայաններ	-	1,246,961
Հայաստանի Հանրապետության պետական բյուջե	318,757	712,389
	318,757	3,123,382

Պետական բյուջե կատարված կանխավճարները ներկայացված են ստորև.

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կոբրա Ինստալասիոնեսի Սերվիսիոս Էս. Էյ.	-	255,278
Էյ Բի Բի Էյ Բի ենթակայաններ	-	8,465
Ավելացված արժեքի հարկ և այլն	318,757	448,646
	318,757	712,389

5 Բանկային հաշիվների մնացորդներ

Ծրագրի իրականացնող՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հատուկ հաշիվ	717	2,409
	717	2,409

Ծրագրի իրականացնող՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հատուկ հաշիվ	1,193,928	934,757
Տեղական հաշիվ	-	2,042
	1,193,928	936,799

6 Կրեդիտորական պարտքեր

Ծրագրի իրականացնող՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Քսիան Էլեկտրիկ Էնջինիրինգ ՍՊԸ	1,415,329	233,620
Կոնսուլեկտրա և Դեկոն Կոնսորցիում	-	35,723
Հայաստանի Հանրապետության պետական բյուջե	-	8,931
	1,415,329	278,274

Ծրագրի իրականացնող՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կոբրա Ինստալասիոնեսի Սերվիսիոս Էս. Էյ.	468,075	1,632,461
Էյ Բի Բի Էյ Բի ենթակայաններ	402,444	1,521,020
	870,519	3,153,481

7 Ծրագրի ֆինանսավորում

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ		
ՎԶՄԲ վարկ 8495-ԱՄ (տե՛ս ծանոթ. 7)	3,594,470	6,543,401
Կառավարության համաֆինանսավորում	877,665	1,866,801
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսավորում	-	20,422
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ		
ՎԶՄԲ վարկ 8495-ԱՄ (տե՛ս ծանոթ. 7)	11,344,156	16,890,521
Կառավարության համաֆինանսավորում	2,637,252	4,226,010
	18,453,543	29,547,155

ՎԶՄԲ ֆինանսավորումը ներկայացված է ստորև.

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ուղղակի վճարներ	2,534,271	6,874,218
ԾՄՀ ընթացակարգեր	3,255,200	3,255,200
Կանխավճար	2,188,198	5,849,124
Կանխավճարի մարում	(3,379,781)	(3,651,974)
Այլ	10,340,738	10,977,355
Սկզբնավճար	-	130,000
	14,938,626	23,433,923

8 Շրջանառու կապիտալի զուտ աճ/(նվազում)

ԱՄՆ դոլար	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային մնացորդներում աճ/(նվազում) (ԲԷՑ)	(1,692)	717
Բանկային մնացորդներում աճ (ԵՋԷԿ)	257,129	1,193,928
Կանխավճարների աճ/(նվազում) (ԲԷՑ)	(1,168,627)	805,075
Կանխավճարների աճ/(նվազում) (ԵՋԷԿ)	(2,804,625)	318,757
Կրեդիտորական պարտքերի նվազում (ԲԷՑ)	(1,137,055)	(1,415,329)
Կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում) (ԵՋԷԿ)	2,282,962	(870,519)
	(2,571,908)	32,629

9 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից ստացված գումարների և Համաշխարհային Բանկի փոխհատուցումների համադրում

Վարկ թիվ 8495-AM

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

Հոդված	Դիմում	ԲԷՑ	ՀԲ	Տարբերություն
(1) Հոդված 1.Ծրագրի Մաս 1(ա), 1(գ), 1 (դ), 2 և Մաս 3 (բ)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր				
	DA-16	1,422,941	1,422,941	-
	DA-20	964,250	964,250	-
	DA-25	868,009	868,009	-
	DA-26	1,567,470	1,567,470	-
		4,822,670	4,822,670	-
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)				
	DA-16	(1,422,941)	(1,422,941)	-
	DA-17	90,000	90,000	-
	DA-18	807,000	807,000	-
	DA-19	67,000	67,000	-
	DA-20	(964,250)	(964,250)	
	DA-21	100,000	100,000	-
	DA-22	435,000	435,000	-
	DA-23	220,000	220,000	-
	DA-24	114,000	114,000	-
	DA-25	(868,009)	(868,009)	-
	DA-27	194,000	194,000	-
		(1,228,200)	(1,228,200)	-
Ընդամենը		3,594,470	3,594,470	-

10 «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ կողմից ստացված գումարների և Համաշխարհային Բանկի փոխհատուցումների համադրում

Հոդված	Դիմում	ԵՋԷԿ	ՀԲ	Տարբերություն
Հոդված 2. Ծրագրի Մաս 1(բ), 1(ե) և 3(ա)-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր				
	DP-8-Y-15	709,916	709,916	-
	DP-9-Y-17	256,885	256,885	-
	AD-3-Y-16	1,028,626	1,028,626	-
	AD-4-Y-18	1,295,955	1,295,955	-
	AD-5-Y-19	1,193,188	1,193,188	-
	AD-6-Y-20	1,663,900	1,663,900	-
	AD-7-Y-21	1,148,866	1,148,866	-
	AD-8-Y-22	986,328	986,328	-
	AD-9-Y-23	1,366,103	1,366,103	-
	AD-10-Y-24	1,657,773	1,657,773	-
		11,307,540	11,307,540	-
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)				
	AD-3-Y-16	(28,626)	(28,626)	
	AD-4-Y-18	(95,955)	(95,955)	
	AD-5-Y-19	156,812	156,812	-
	AD-6-Y-20	1,100	1,100	-
	AD-7-Y-21	1,134	1,134	-
	AD-8-Y-22	1,672	1,672	-
	AD-9-Y-23	397	397	-
	AD-10-Y-24	82	82	-
		36,616	36,616	-
Ընդամենը		11,344,156	11,344,156	-

11 Իրավական հարցեր

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատն իրականացրած հաշվեքննության արդյունքներով արձանագրել է անհամապատասխանություններ և այլ փաստեր Ընկերությունների կողմից իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում: Սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ Ընկերությունների ղեկավարությունը չի կարող գնահատել այս ուսումնասիրությունների ազդեցությունը Ծրագրի արդյունավետության վրա: